

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼԻԱՆ. ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ ԲԱՆԱԿՈՐ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՈՒՈՎՈՒՅԹՈՒՄ, ԵՐԷԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՄ., 2021, 904 էջ, DVD + քարտեզ*:

VERJINÉ SVAZLIAN. THE ORAL TRADITION OF THE ARMENIAN-AMERICANS IN THE COURSE OF TIME, Yerevan, “Gitoutyoun” Publishing House of NAS RA, 2021, 904 pages, DVD + map.

Բանալի բառեր՝ Վ. Սվազլյան, Ամերիկա, ցեղասպանություն, բանահյուսություն, ժողովածու, նվիրում, արդիական արժեք, ճանաչողություն:

Պատմական արժեքի առումով եզակի են այն ջանքերը, որ գործադրել է բանագիտության դոկտոր Վերժինե Սվազլյանն՝ աշխարհի տարբեր երկրներում ապրող ցեղասպանության վերապրածների վկայությունները գրառելով և դրանք ոչ միայն մեզ՝ հայերիս, այլև աշխարհի մարդկությանը ներկայացնելով: Ցեղասպանությունը վերապրածների վկայություններն ամփոփող գրքերը լույս են տեսել նաև անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, թուրքերեն: Գրքերի մեծագույն մասը հրատարակել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը: Լոնդոնում 2006-ին լույս տեսած աշխարհի բանահյուսությունը ներկայացնող հանրագիտարանում Հայաստան հոդվածի հեղինակը վերստին Վ. Սվազլյանն է (տե՛ս “The Greenwood Encyclopedia of World Folklore and Folklife”, v. 2, pp. 357-372):

Ահա այս հարուստ ինքնաստեղծ գրադարանին բանագետն ավելացրեց մեծարժեք ու սովորաձավալ նոր գիրք՝ «Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովույթում» խորագրով (904 էջ) (անգլերենի թարգմանիչ՝ Տիգրան Ծուլիկյան): Գիրքը բացվում է «Հայերի տեղաբաշխումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում» քարտեզով (քարտեզը կազմել է Հ. Գ. Սարգսյանը): Հատորն ավարտվում է «Ամերիկահայոց շրջանում տարածված ժողովրդական կատարումներ» ձայներիցով:

Գիրքը երկնեզու է՝ հայերեն ու անգլերեն: Դրանում, բացի գիտական գրականության համար պարտադիր ու բազմատեսակ ցանկերից, կան նաև բանասացների լուսանկարները (էջ 836–850): Լուսանկարները՝ հայերեն ու անգլերեն, ներքևում ծանուցում են լուսանկարի տիրոջ անուն-ազգանունը, ծննդյան թվականը, ապրելու բնակավայրը:

Գրքի խմբագիրն է եղել երջանկահիշատակ բանագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանը, որը «խմբագրի կողմից» խոսքն ավարտում է հետևյալ եզրահանգումով. «Սույն գիտական աշխատությունը մինչև օրս հայ բանագիտության պատմության մեջ առաջինն է, որ նվիրված է հայ սփյուռքի մեծագույն համայնքներից մեկի՝ ամերիկահայոց բանավոր ավանդույթի գիտական համակողմանի ուսումնասիրությանը, որն իր պատմաճա-

* Ներկայացվել է 30. III. 2022 թ., ընդունվել է տպագրության 13. IV. 2022 թ.:

նաչողական արժեքով հայ ժողովրդի արդի մշակութի պատմության մեջ կարևոր և բացառիկ արժեք է ներկայացնում» (էջ 7):

Գրքի սկզբում կա «Ներածություն» բաժինը, որում հեղինակը ներկայացնում է հատորի նյութերի մատուցման հետ կապված հեղինակային գիտական մոտեցումները:

Գրքի առաջին բաժինը՝ «Պատմագիտական ուսումնասիրություն», ունի չորս ենթաբաժին:

Երկրորդ բաժինը բաղկացած է սկզբնաղբյուրներից՝ վկայություններով ցեղասպանության ականատեսների ու նրանց ժառանգների, նաև բանահյուսական ժանրերի առանձին տեսակների նյութերի բաժանումով՝ հեքիաթներ, առակներ, կենդանական զրույցներ, բարոյախրատական զրույցներ, պատմական զրույցներ, կենցաղային զրույցներ, հայերը գաղթաշխարհում, հայերն Ամերիկայում, հայրենադարձներ, զավեշտական զրույցներ, նորեկողները խորհրդային հայրենիքում, հայաստանցիներն Ամերիկայում, ամերիկահայոց պատմական երգեր, որոնք Հայոց ցեղասպանությունն են (1915–1923 թթ.) ներկայացնում, նաև՝ որբի ու որբանոցի, հայրենագրկումի, պանդխտության, հայրենադարձության, մանկության, սիրո և ընտանիքի, կենցաղի, խնջուքի, ազգահավաքի ու հայրենասիրական երգեր:

Խիստ ուշագրավ է ամերիկահայերի իմաստասիրությունների բաժինը, որում կան առած-ասացվածքներ, իմաստուն մտքեր, հանելուկներ և նման դրսևորումներ: Գրքում տեղ են գտել ամերիկահայերի տոները ներկայացնող բաժինը, նաև երգերի նոտագրությունը:

«Պատմագիտական ուսումնասիրություն» բաժնի սկզբում դրված է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի՝ Սվազյանի բանագիտական գործունեությանը տված հետևյալ ճշգրիտ գնահատականը. «Վերջինս Սվազյանի բազմամյա բանահավաքչական ու բանագիտական աշխատանքն իր մեթոդական նոր մոտեցումներով և ծանրակշիռ արդյունքներով նոր խոսք է հայ բանագիտության ասպարեզում: Նա իր բանահյուսական հարուստ ու բազմաժանր նյութերի և Հայոց ցեղասպանության ականատես վկաների պատմած հուշերի բնագրագիտական իմաստավորմամբ ու մանրագնին քննարկումներով իր նախադեպը չունի ընթացիկ հարյուրամյակի՝ 20-րդ դարի արևմտահայ բանավոր ավանդության հավաքման և ուսումնասիրման պատմության մեջ» (էջ 11):

Նախքան այս կարևոր գրքի առանձին բաժիններին անդրադառնալը՝ նշենք, որ Սվազյանի գիրքը փաստացի նյութերի հիման վրա առաջադրում է մի սրբազան պատգամ՝ հայր հայ է հայրենի հողի վրա, ինչպես Ստեփանոս Նազարյանցը կասեր՝ հայն օտարության մեջ հավասար է ծովի մեջ մի կաթիլ ջրի: Այս գիրքը ինչ-որ առումով նաև Շահան Շահնուրի «Նահանջ երգի» գրքի խորհուրդն ունի՝ զգուշացնում է օտար երկրում հայի ուժացման մասին: Պատահական չէ, որ Շահնուրի վեպը մտել է աշխարհի 1001 այն գրքերի ցանկի մեջ, որ ամեն մարդ պիտի կարդա մինչև մեռնելը¹:

Ըստ ամերիկահայոց վկայությունների է շարադրված «Հայերն Ամերիկայի Միացյալ Նահանգներում» բաժինը, որը փաստավավերական հիմքով է

¹ Shu 1001 Books You must read before You Die. London, 2010, p. 335.

ստեղծված ու տեղեկատվական յուրօրինակ հանրագիտարան է: Դրանից իմանում ենք, որ առաջին հայր, որը ոտք է դրել ներկայիս ԱՄՆ-ի հողի վրա, եղել է Ջոն Մարտին հայր՝ 1618-ին: Հետո՝ 1653-ին, երկու հայ վարպետներ Վիրջինիայի գաղութի ղեկավարի հրավերով հրավիրվել են Ամերիկա՝ չերամաբուծությունն ու մետաքսագործությունը զարգացնելու նպատակով:

XIX դարի 30-ական թվականներին հայերը Կիրիկիայից ու Անատոլիայից Ամերիկա են մեկնել կաթոլիկ միսիոներների գործունեության հետևանքով: Հետագայում հայկական տարրը ստվարացել է համիդյան ջարդերի ու, հատկապես, Հայոց Մեծ ցեղասպանության պատճառով: Այդ հայերը կրթվել են ու Միացյալ Նահանգներում դարձել հայտնի դեմքեր: Դրանցից մեկն է «քիմիկոս-գյուտարար Քրիստափոր Տեր-Սերոբյանը, որի հնարած կանաչ և սև ներկերի բաղադրությունը մինչև օրս անհնար է դարձնում ամերիկյան դոլարի նենգումը» (էջ 13):

Սվազլանը ներկայացնում է ԱՄՆ-ում բացված առաջին հայ եկեղեցիների ու դպրոցների համառոտ պատմությունը: Դրանց գուգահեռ շարադրում է հայկական միությունների կազմավորումն այդ երկրում:

Չափազանց հետաքրքիր են ամերիկահայեր Բարբարա Չուգասըզյանի ու Հարութ Սասունյանի ինքնակենսագրական հուշապատմւները:

Երգչուհի Բարբարա Չուգասըզյանը (ծնվ. 1946 թ.) 2008-ին Սան-Ֆրանցիսկո-Ֆրեզնոյի իր առանձնատանը, ազատություն տալով իրեն տանջող մտքերին, խոստովանություններ է արել, որոնք նոր լույս են սփռում ամերիկահայության կյանքի վրա (էջ 40–42): Նրա մեծ պապը համիդյան ջարդերի ժամանակ 1896-ին, Մուշից գալիս է Ամերիկա: Բարբարայի ծնողները ծնվել են ԱՄՆ-ում: Նրանք, հայկական դպրոց չլինելու պատճառով, հաճախում են անգլիական դպրոց, իսկ տան խոսակցական լեզուն եղել է հայերենը: Բարբարան բացատրում է, թե երկու հանգամանք հայերին խանգարում է Ամերիկայում հայ մնալուն: Նախ՝ հայկական եկեղեցու պատարագը, որը գրաբարով է ու անհասկանալի, երկրորդ՝ Աստվածաշունչը հարկավոր է քարոզել ոչ թե գրաբար, այլ ժամանակակից հայերենով (էջ 41): Իր ծնողները հետևյալ պատգամն են տվել իրենց զավակներին. «Դու՛ն հայ ես՝ պիտի լա՛վր ընես, դու՛ն հայ ես՝ պիտի լա՛վր ըլլաս, դու՛ն հայ ես՝ պիտի աշխատիս հայու պատիվը բարձր պահե՛ս, դու՛ն հայ ես՝ պիտի հաղթե՛ս» (էջ 41): Բարբարան հին արտագաղթածներին համեմատում է Հայաստանից վերջին տարիներին արտագաղթածների հետ և մեծ տարբերություն է տեսնում ...

Հարութ Սասունյանի (ծնվ. 1950 թ. Հալեպ, ապրում է Լոս Անջելեսում) հարցազրույցը պատկերում է վերջինիս հայանպաստ ու հայրենասիրական գործունեությունը: Նա երկու բարձրագույն ուսումնական հաստատություն է ավարտել ԱՄՆ-ում, չորս տարի ապրել է Ժնևում և կարևոր գործ կատարել Հայոց ցեղասպանությունը միջազգայնորեն ճանաչել տալու սրբազան գործում: Նա անգամ Սումգայիթի ջարդերի իրողությունն է միջազգային ուշադրության արժանացրել: Հարցազրույցում կա հետաքրքիր փաստ: Ժնևի ՄԱԿ-ի մարդու իրավունքների բաժանմունքում Սասունյանը ելույթ է ունեցել՝ դատապարտելով Սումգայիթի հայության ջարդերը. «Հաջորդ օրը, երբ ելույթները սկսան, հերթը հասավ ինձի, սկսա դատապարտել Սումգայիթի դեպքերը: Ան ժամանակ բացառիկ բան մը պատահեց. Սովետ Միության

ամբողջ պատվիրակությունը ոտքի կանգնեց և հեռացավ ՄԱԿ-ի շենքից» (էջ 417):

Հարութ Սասունյանը եղել է Քրք Քրքորյանի հիմնած «Լինաի» հիմնադրամի փոխտնօրենը ու ներկայացնում է, թե հսկայական ինչ գումարներ է փոխանցվել Հայաստանին և Արցախին: Քրք Քրքորյանը, իմանալով Լիբանանի հայկական վարժարանների նյութական ծանր վիճակի մասին, 28 հայկական վարժարանների օգնություն է ուղարկել չորսուկես միլիոն ամերիկյան դոլար (էջ 418):

Ուսանելի է Ջեք ու Եվա Մեծորյան ամուսինների՝ դեպի Հայաստան ունեցած վերաբերմունքը, որոնք հաճախ եկել են Հայաստան: 2012 թ. մայիսին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Ջեք Մեծորյանին հայրենիքին մատուցած ծառայությունների համար պարգևատրել է «Մովսես Խորենացի» մեդալով: Եվա Մեծորյանը, ով հիանալի ձայն ունի ու երգում է, պատմում է Բոստոնի իր մանկության օրերի հիշողությունների մասին, որոնցում Սովետական Հայաստանն ունեցել է իր պատվավոր տեղը. «Պատերազմեն վերջը՝ 1945-ին, ես հազիվ 14 տարեկան էի, երբ սկսած եմ բեմերու վրա հայկական երգեր երգել: Լավ ձայն ունեի, և ինձի կսիրեին: Մենք հայկական ձեռնարկներ կկազմակերպեինք, ինչպես, օրինակ, Հայաստանի սովետականացման տարեդարձը՝ նոյեմբերի 29-ը, անպայման ամեն տարի կնշեինք: Տեղի հայերը կհավաքվեին մեծ դահլիճի մը մեջ, աղվոր հայկական երեկո կանցկացնեինք: Շատ լավ պարի խումբ ունեինք» (էջ 393):

Բազմաթիվ են Սվազյանի գրառած ցեղասպանությունը վերապրածների վկայությունները ու իրենց հայությունը պահպանած անհատների հարցազրույցները:

Հիմա՝ մեր հայրենիքի այս ծանր օրերին՝ Շուշիի ու Հադրութի կորստից հետո, լսում ենք, որ թուրքական «Գորշ գայլեր» կոչված բռնություններ կատարող զինվորականները հայտնվել են Շուշիում:

Սվազյանի գրքում կա «Թուրքերուն ծագումը՝ գորշ գայլը» գրույցը: Նրանում ասվում է, թե թուրքերը մոնղոլական ծագում ունեն և եկել են Չինաստանի կողմերից: Այդ քոչվորները մի օր գորշ գայլ են տեսնում ու իրենց ձիերի վրա նստած հետևում են նրան: Գորշ գայլը գալիս է Հայաստան, իրենք էլ նրա հետևից գալիս են Հայաստան: Տեսնում են լավ երկիր է, մտածում են մնալ այդտեղ և հաստատվում են Հայաստանում: Դրանից հետո իրենց խորհրդանիշը դարձնում են Գորշ գայլը: Թուրքերը սկսում են ճնշել հայերին, ծանր հարկեր են դնում նրանց վրա, սպանում են, այրում տները: Հետո սկսում են փախցնել մինչև տասը տարեկան քրիստոնյա տղաներին, թլպատում են, իսկամացնում, փոխում նրանց լեզուն ու դարձնում են ինչերի: Թուրքերը հայերին արգելում են հայերեն խոսել, մինչև իսկ հայերեն խոսելու համար կտրում են լեզուն: Հիմա էլ Թուրքիայում հավատարիմ իրենց նախնիների դաժան ու բռնի ավանդույթներին կա «Գորշ գայլեր» անունով երիտասարդական հետադիմական կազմակերպություն (էջ 439):

Բանահյուսական որոշ միավորներ, ըստ երևույթին, հայկական միջավայրում թափառող սյուլեներ են: Ինչպես, օրինակ, «Թագավորն ու աղքատը», որը կա հեքիաթի ձևով տարբեր նահանգներից գրաված հյուսիսաօսերում:

Աղքատը կարողանում է այնպիսի սուտ ասել, որ թագավորն աղքատի բերած տուպրակը լցնում է ոսկով (էջ 446):

«Պատմական գրույցներ» բաժնում հետաքրքիր պատումներ կան ինքնիշխան Հայրիկի, Անդրանիկ Զորավարի, Սողոմոն Թեհլիրյանի, Վիլյամ Սարոյանի, Նիկոլ Աղբալյանի, Գարեգին Նժդեհի, Վազգեն Ա. կաթողիկոսի, Մոնթե Մելքոնյանի և նշանավոր այլ հայերի մասին:

Ինքնիշխան Հայրիկը համեմատվում է Ավարայրի հերոսամարտին մասնակցած Ղևոնդ Երեցի, Ներսես Մեծի, Ներսես Շնորհալու հետ: Ինքնիշխան Հայրիկն իր «Պապ և թոռ» գործով հային պատգամում է կապվել հարազատ երկրի հետ, մշակել հողը, ստեղծել բարիք: «Հայոց Հայրիկը ոչ միայն մնաց իր բարձրության վրա, այլև հայրենի փուշը նախընտրեց օտարի վարդից» (էջ 470):

Զորավար Անդրանիկի մասին պատմող գրույցում ասվում է. «Իսկ ինչ կվերաբերի թուրքերուն՝ հայրս կըսեմ, որ հայազգի մեծ զորավար Անդրանիկը միշտ հակառակ եղած է թուրքերուն և ըսած է դաշնակներուն. «Դուք հաշտվեցաք թուրքերու հետ, բայց ես թուրքի հետ չեմ կրնալ հաշտվիլ մինչև իմ մահը: Օրը պիտի գա, որ այս հեղափոխականներն (նկատի ունի՝ երիտթուրքերին – Վ. Ս.) ալ պիտի դառնան սուլթան Համիդի պես գազան մը և բոլորիդ ալ պիտի ոչնչացնեն» (էջ 471):

Սողոմոն Թեհլիրյանին ներկայացնող գրույցում կա այսպիսի փաստ: Թալեաթը միակը չէ, որին սպանել է Սողոմոնը. նա սպանել է նաև Հարություն Մկրտչյան անունով մի հայի, որը ոստիկանապետ Պետրի միջոցով Թալեաթին է հանձնել Պոլսի 250 հայ մտավորականների սև ցուցակը, ու այդ ցուցակի անուններից միայն 10 մարդ է կենդանի մնացել (էջ 472):

«Անգլիագիր հայ գրող Վիլյամ Սարոյանը» գրույցում կարևոր փաստեր են հաղորդվում աշխարհահռչակ հայ գրողի մասին: Սարոյանի «Մարդկային կատակերգություն» (1942 թ.) գրքի հիման վրա նկարահանված ֆիլմի սցենարի համար Սարոյանն արժանացել է «Օսկար մրցանակի»: Բերվում է նաև Սարոյանի հետևյալ հայտնի ինքնագնահատականը. «Թեև գրում եմ անգլերեն և ծնունդով ամերիկացի եմ, բայց ես ինձ համարում եմ հայ գրող: Լեզուն, որով գրում եմ անգլերենն է, միջավայրը, որ նկարագրում եմ ամերիկյան է, իսկ ոգին, որ ինձ մղում է գրելու՝ հայկական է: Ուրեմն, ես հայ գրող եմ ...» (էջ 473):

Գարեգին Նժդեհին նվիրված գրույցում պատմվում է, թե Նժդեհին երևանից Սիբիր տեղափոխելուց առաջ նրա վերջին ցանկությունն է եղել սեփական աչքով տեսնել Արարատը (էջ 474):

Հայերը գիտեն, որ իրենք դարերի ընթացքում աշխարհին տվել են հանճարներ: Եվ սնապարծ հայերի մի տեսակ, որն առանձնապես բարձր կրթական մակարդակ չունի, սիրում է աշխարհի շատ նշանավոր մարդկանց հայացնել: Գրքում զավեշտալի մի շարք նմանօրինակ մանրապատումներ կան: Դրանցից մեկը կոչվում է «Զորջ Վաչինգտոնը և հայ տղաները»: «1776-ին՝ Ամերիկայի անկախության համար մղված կռիվներուն ժամանակ, երկու խարբերողի հայ տղաներ իրենց գինվորական պահակակետին մեջ, գիշերվա ցուրտեն սառելով, մեկը մյուսին կըսե.

– Սարգիս եղբայր, ինչ հիմար էինք, որ ձգեցինք մեր գեղեցիկ խարբերողը և եկանք հոս, որ ցուրտեն մեռնինք:

Այդ պահուն Անգլիո դեմ ապստամբող ամերիկյան գաղութներու զինված ուժերու հրամանատար Ջորջ Վաշինգտոնը, որ ձիու վրա նստած կշռեր, կսե ադ խոսքերը և կրսե.

– Տղաներ, դո՛ւք էլ հայ եք» (էջ 508):

Բավականին մեծ թիվ են կազմում հրեաների՝ ֆրանսիացիների, ռուսների և, հատկապես, հայերի համեմատական բնութագրերը պարունակող զավեշտալի գրույցները: Դրանցից մեկն է՝ «Հրեաները և հայերը». «Դժոխքին մեջ հրեաներուն և հայերուն կմտցնեն եռացող ջրով լիքը կաթնայի մը մեջը: Հրեաները իրար ուս-ուսի բարձրանալով՝ դուրս կուգան կաթնայի մեջեն՝ կազատվին: Հայուն մեկը, երբ կփորձե դուրս գալ, անոր ոտքերեն կքաշեն, վար կբերեն, որ իրարու հետ խաչվին» (էջ 515):

Զավեշտալի մանրապատումներ կան նաև կապված Ստալինի, Ռուզվելտի, Լենինի, Ջերջիլի, Խրուշչովի և Ջոն Քենեդու հետ: «Խրուշչովին քննադատող մարդը» զավեշտում կարդում ենք. «Մարդուն մեկը Կրեմլ է գնացել, սկսել է պոռալ. «Խրուշչովը ապուշ է, Խրուշչովը էջ է»: Անոր կտանին բանտ կռնեն, երկու տարի կուտան՝ Խրուշչովի դեմ խոսելու և տասը տարի՝ պետական գաղտնիքը մեջտեղ հանելու համար» (էջ 519):

Զավեշտալի գրույցներ կան նաև կապված Քլինտոնի, Ելցինի, Լևոն Տեր-Պետրոսյանի, Բեն Լադենի, Բուշ Կրտսերի, Ջորջ Բուշի և Էրդողանի, Օբամայի հետ:

Բանահյուսական խաղիկների, օրորոցային երգերի հետ կան ազգահավաքի ու հայրենաբաղձության պարզ, սակայն սրտանց ասված երգեր.

Ով որ ազգը ուրանա
Ձույգ աչքերով կուրանա,
Կատարյալ աղքատի պես,
Դունես ի դուռ մուրա նա:
Մենք Վարդանա ենք հոգով,
Ձկա մեր մեջ օտար ոք,
Հայրենիքին օգնելով՝
Կսփոփվինք մենք օրեցօր (էջ 589):

Հարուստ է առած-ասացվածքների բաժինը, որում դարավոր փորձի հիման վրա ստեղծված իմաստախոսություններ են, որոնք վերծամանակյա են՝ «Առյուծի մը հետ կռվե, քան թե՛ հազար հատ մուկի» (էջ 594), «Լավ է քու տունիդ չոր հացը, քան՝ ուրիշի խորովածը» (էջ 598), «Հրեային գլուխը կաշխատի, հայուն՝ ձեռքերը» (էջ 600), «Ով թուրքեն խեր տեսնա, Աստուծոմեն շառ կտեսնա» (էջ 601), «Վատատեսը շուտ կհիասթափվի, լավատեսը ելք կփնտրե» (էջ 602), «Տալու հաճույքն ավելի մեծ է, քան՝ ստանալու» (էջ 602) և այլն: Բազմաթիվ են նաև բարոյախոսական խրատները՝ «Ամեն հաջողած տղամարդուն ետևը միշտ խելացի կին մը կա, իսկ չհաջողածին ետևը՝ մեկ ուրիշ կին» (էջ 604), «Աստուծոմեն չվախեցողեն վախեցիր» (էջ 606), «Գործեն մի՛ վախեցիր, գործը թող քեզմե վախենա» (էջ 607), «Դուն հայ ես՝ պիտի հաղթե՛ս» (էջ 607), «Եթե հայու արյուն ունիս մեջդ, պիտի պայքարիս» (էջ 607), «Երբ լեզուդ կկորսնցնես՝ ազգդ կկորսնցնես» (էջ 608), «Հարգիր ծնողքդ և սի-

րիր» (էջ 610), «Մարդը կգնա, գործը կմնա» (էջ 611), «Մի՛ ըներ չարիք, չտեսնաս չարիք» (էջ 612), «Շատ չկուսնաս, կհեծնեն վրադ» (էջ 613), «Ազգի մը հայերին իր պատմությունն է» (էջ 615), «Ազգի մը ուժը անոր ոչ թե քանակի, այլ որակին մեջ է» (էջ 615), «Ամեն մարդու բախտը իր ձեռքին է» (էջ 615), «Անիծվի այն հայը, որ կուրանա իր ազգը» (էջ 617), «Ծառը արմատով է զորավոր, հայը՝ իր ազգով» (էջ 620) և այլն:

Վ. Սվազյանի «Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովոյթում» գիրքն ունի ուսուցողական խոր իմաստ: Այն մտահղացվել և արարվել է 40 տարի տևած ստեղծագործական աշխատանքի շնորհիվ, երբ հեղինակը 1979, 1990, 2001, 2004, 2008 թվականներին այցելել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, եղել է տարբեր քաղաքներում, հանդիպել ամենատարբեր դարձմունքի ու տարիքի հայերի հետ և փշուր առ փշուր հավաքել ամերիկահայերի բանավոր ստեղծագործության հյուսվածքները՝ դրանք դարձնելով ընդհանուրի սեփականությունն ու ավանդելով ապագա սերունդներին:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բ. Գ. Դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 33 գրքի և շուրջ 675 հոդվածի: aelita.dolukhanyan@gmail.com